

## ԱՐԱՏՏԱ ԵՐԿՐԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՁ

Արատտա երկիրը վկայուած է շումերական վիպերգերում, եւ ըստ շումերների պատկերացումների, «Սուրբ օրէնքների (ծէսերի) երկիր» է։ Արատտան գտնուել է Հայկական լեռնաշխարհում։ Այդ տեղորոշումը, մեր կարծիքով, բաւական համոզիչ կերպով կատարել է Արտակ Մովսիսեանը<sup>1</sup>։

Շումերական տեքստերում Արատտա երկրանունը գրւում է յատուկ գաղափարագրով, որ ունի Արատտա (Aratta) ընթերցում։ Այդ սեպախումը ընթեւեալն է , որ իրենից ներկայացնում է երեք սեպերի համադրում։ Այս համադրումը շումերերէնում՝ ներկայացնում է LAMxKUR+RU ձեւով։ LAM  նշանի մէջ (կամ վրայ) ներգծուած են KUR  եւ RU  նշանները։

Նոյն երկիրը կարող է ունենալ մի քանի տարբեր անուն յատկապէս տարբեր ինքուններում։ Նաեւ պէտք է նկատի առնել, որ հնում (ընդհուպ մինչեւ միջնադար) յատուկ անունները, այդ թւում եւ՝ տեղանունները, թարգմանուում էին (հմմտ. Մեսոպոտամիա-Միջագետք, Հելլոպոլիս-Արեկ քաղաք եւ այլն)։ Որպէսզի մենք ճշտենք, թէ շումերներն ինչպէս են անուանել այդ երկիրը, պէտք է քննենք այս սեպախումըրը։

LAM սեպը, երբ ներկայանում է միայնակ (առանց գետեր-մինատիւնների եւ այլ գանկերի), ըստ PSD-ի կայքի, ունի միայն

<sup>1</sup> ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԻՆ. «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամեակում (ըստ գրաւոր աղբիւրների)»։ Հարցի ուսումնակրութեան պատմութիւնը եւ Արատտացի տեղորոշման փաստարկները մանրամասն տե՛ս գրքի «Արատտա երկիրի տեղորոշումը» բաժնում՝ էջ 16-29։

<sup>2</sup> Փեսարիվանիացի համարաբանի շումերագիտութեան բաժնի կայքն է, որ ներկայում չումերերէնի ամենամբողջական բաւարանն է. տե՛ս <http://psd.museum.upenn.edu/cpsd/nepsd-frame.html> (յապատմամբ՝ PSD)

մէկ իմաստ. «to flourish – ծաղկել»: Կայ նաեւ սրա իմաստային նրբերանգը. «to make grow luxuriantly – վարթամօրէն աճեցնել, ուռճացնել, ծաղկեցնել»:

KUR սեպի հիմնական երկու իմաստներն են «land, country-հող, երկիր» եւ «mountain(s)-լեռ(ներ)»:

RU վերջին սեպը մեծ հաւանականութեամբ հնչիւնական բաղադրիչ է եւ իմաստային բեռ չի կրում: RU-ն դրուած է յուշելու համար, որ KUR նշանը պէտք է կարդալ հէնց KUR (ոչ թէ ասենք mat կամ sat կամ gin<sub>3</sub>). այսինքն՝ նախորդ նշանի ընթերցումը պէտք է աւարտուի R-ով:

Հաստ Լարայի բառարանի<sup>3</sup>, Արատտա երկրի անունը գրում է երկու կերպ.

LAM.KUR.RU<sup>ki</sup>=Aratta<sup>ki</sup> եւ LAMxKUR.RU<sup>ki</sup>=Aratta<sub>2</sub><sup>ki</sup>

LAMxKUR+RU-aratta սեպախումբը որպէս հասարականուն նշանակում է. «heavy, important-ծանրակշիռ, կարեւոր» եւ «praise, glory-գովարանութիւն, փառաբանութիւն»: Մենք կարծում ենք, որ իմաստային այս անցումը կազ ունի հէնց LAM-«ծաղկել» գաղափարի հետ: Հմտութիւնը օրինակ հայերէն բարգաւաճ բառը, որի համար Հր. Աճառեանն իբրեւ առաջին իմաստ դնում է «պանծալի, փառաւոր, անուանի», ապա (իբրեւ երկրորդ իմաստ). «զուարթ, ծաղկեալ»: Փոխարեւական իմաստները ծագում են առարկայական իմաստներից: Առաջին, ամենանախնական եւ առարկայական իմաստն այստեղ «ծաղկել»-ն է:

Այսպիսով, ունենք մի սեպախումբ, որ նշանակում է «ծաղկել-լեռ(ներ)»: Ահա Արատտայի չումերական անունը (անուններից մէկը): Այս անունը մեզ տանում է դէպի Ծաղկեն լեռ, Ծաղկանց լեռներ:

Այս մասին յիշենք հանրագիտարանային տուեալներ.

«Ծաղկանց լեռներ, Ալադաղ, Ծաղկի լեռ(ներ), Ծաղկոտան լեռներ, Շառիան-Ալադաղ, - Լեռներ (լեռնաշղթայ) Հայկական լեռնաշխարհում, Վանայ լճից հիւսիս-արեւելք, Արածանիի վերին հոսանքի շրջանում, նրա ձափի կողմում, Մանագկեր-

<sup>3</sup> René Labat, «Manuel d'Epigraphie Akkadienne», Paris 1976. էջ 197. սեպախուններ N 435 եւ N 436.

որի եւ Ալաշկերտի դաշտերի միջեւ: Հարսու-արեւմուտքից հիւսիս-արեւելքը աղեղնաձեւ տարածուած լեռնազանգուած է՝ կազմուած հրարխային ապարներից: Լաւաներն ընդարձակ տարածութեամբ փուռած են չորս ուղղութիւններով: Դէպի հիւսիս տարածուող լաւային բարձրաւանդակները Արածանիի ճախակողմեան վտակների շնորհիւ վեր են ածուել մի քանի լեռնաբազուկների... Կենարոնական լեռնաբազուկներից մէկը վերջանում է ոչ այնքան բարձր նպատ զագաթով: Սրա հիւսիսային ստորոտների փոքրիկ հարթավայրը, որ կազմում է Ալաշկերտի դաշտի մի մասը, հնուու յայտնի էր Զիրաւ անունով: Հստ Ալիշանի, լատինական աղբիւրներում նպատ զագաթի անունով այս լեռնաշղթան կոչուել է նաեւ նպատ կամ նպատական Արեւելքում գտնուում է լեռնաշղթայի ամենաբարձր՝ թոնդուրեկ (թոնդրակ) զագաթը, հիւսիս-արեւմուտքում՝ Ծաղկոյ կամ Ալաղաղ զագաթը, որ իր բարձրութեամբ երկրորդն է, բայց աւելի վեհաշուք: Սրա անունով էլ կոչուած է ամրող լեռնաշղթան: Լեռնազանգուածը մասնատուած է Արածանի, Արճէշ եւ Բերկրի գետերի հովիաներով, որոնք եզերուելով բարձրագիր զագաթներով, կազմում են մի գեղեցիկ, ծաղկաչատ բարձրաւանդակ: ... Դեռեւս հնուց յայտնի էր որպէս Արշակունիների ամառանոցավայր: Այստեղ է եղել Շահապիւանը, որը յայտնի էր որպէս «Բանակատեղի Հայոց թագաւորաց»: Հստ Ալիշանի լեռնաշղթայի հիւսիսային կողմը Յայսմաւուրքում կոչուել է «Ծմակ լեռան Ծաղկոց»: Ոմանք Ծաղկանց լեռները նոյնացնում են ասորեստանեան սեպագիր արձանագրութիւններում յիշատակուած իրդիա (էրիտիա) լեռներին»<sup>4</sup>:

Էրիտիա-Ալաղաղ նոյնացումը կատարել է Ն. Աղոնցը. «Իրիտիան չի կարող Սիփանը լինել, ինչպէս կարծում է Շարիկը...: Սարգոնը, արեւելքից գալով, Արքարիա լեռից հասնում է Իրիտիա լեռը, անցնում Արմարիիի վրայով և հասնում լիի ափը: Քանի որ Սարգոնը գալիս էր արեւելքից արեւմուտք, ուրեմն Իրիտիա կամ Իրիտիան պէտք է գտնուէր լիի հիւսիսային կետում, Ալաղաղի լեռնաշղթայում»<sup>5</sup>, «Եփրատի ակունիքին կանգնեցուած պատկերն այն է, որ Սալմանաս սարը բողել էր Իրիտիա լեռան վրայ 857 թուականին: Իրի-

<sup>4</sup> Հայաստանի եւ յարակից լըջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀՇՏԲ), հ 2, էջ 834:

<sup>5</sup> Ն. Աղոնց «Հայաստանի պատմութիւն», Երեւան 1972, էջ 86.

տան կազմում է Ալադաղի մի մասը, որտեղից սկիզբ է առնում Եփրատի քաղմաքիւ ակունքներից մեկը»<sup>6</sup>:

*Ասորեստանեան աղբիւրներում լեռնանունը գրուած է E-ri-ti-a (=E-ri-di-3-a)<sup>7</sup> ձեռով: Մասնադիտական գրականութեան մէջ այս անունը կապուել է ուրարտական ԱՐՈՒ Er-di-ia, ԱՐՈՒ E-ri-di-a-ni<sup>8</sup> քաղաքանուան հետ<sup>9</sup>: Մեպագիր RI նշանը, նոյն RE նշանն է, եւ գրուածը նոյն յաջողութեամբ կարելի է կարդալ նաև <sup>10</sup> E-re-ti-a, <sup>Բայով</sup> E-re-di-a-ni:*

Ե՛ւ շումերերէնում, Ե՛ւ ուրարտերէնում առկայ է մի ձայ-նաւոր (բաց վանկ), որ հնչում է ա-ի եւ է-ի միջեւ, կայ ա-է հերթագյում: Սա նշանակում է, որ Արատտա անունը կարող էր հնչել նաև Երեսէ, Երեղէ: Մենք խիստ հաւանական ենք համարում Ն. Աղոնցի նոյնացումը (Էրիտիա=Ալադաղ=Մաղկանց լեռներ). այսինքն՝ Սալմանասար III-ի յիշատակած էրիտիա-էրիդիա լեռնանունը կարող է նոյնը լինել Արատտա տեղանուան հետ: Ն. Յարութիւնեանն այն տեղադրում է վանայ լճից հիւսիս<sup>10</sup>:

«Մաղկանց լեռներ - Ալադաղ, գտնւում են Հայկական լեռնաշխարհում, Արածանիի վերին հոսանքի շրջանում, Վանայ լճից հիւսիս-արեւելքի, Մանազկերտի եւ Արազայի դաշտերի միջեւ: Արեւելքում բարձրանում են թոնդրակ (3542 մ), արեւմուտափում՝ Մուրատբաշի (թուրքերէն անունը նշանակում է Մուրադ-Արածանիի գլուխ) (Մաղկոյ լեռ 3519 մ), մերձգագաթնային սարաւանդի վրայ՝ Նպատ (2332 մ), Ալա-դաղ (3351 մ), Կալտիկ (3200 մ), Կերպահոլ (3255 մ) գագաթները...: Մաղկանց լեռները մասնատուած են Արածանի, Արձէշ եւ Բերկրի գետերի հովիտներով»<sup>11</sup>:

«Մաղկոտն, Մաղկեռոտն, Մաղկոռոտն, Մաղկուտն-գաւառ Մեծ Հայքի Այրարատ նահանգում: «Աշխարհացոյց»-ում (...) յիշատակուած է որպէս Այրարատ նահանգի եօթերորդ գաւառ: Մաղկոտնը հիւսիս-արեւելքից սահմանակից էր Կոգովիտ, արեւ-

<sup>6</sup> Անդ, էջ 89:

<sup>7</sup> Н. В. Арутюнян, «Топонимика Урарту», Ереван, 1985, стр. 261.

<sup>8</sup> Н. В. Арутюнян, «Корпус урартских клинообразных надписей», Ереван, 2001, стр. 504.

<sup>9</sup> Н. В. Арутюнян, «Топонимика Урарту», Ереван, 1985, стр. 261.

<sup>10</sup> Н. В. Арутюнян, «Топонимика Урарту», Ереван, 1985, стр. 261.

<sup>11</sup> Հայկական Սովետական հանրագիտարան, հ.5, էջ 111:

մուտքից՝ Բագրեւանդ գաւառներին, Հարաւից՝ Վասպուրական, Հարաւ-արեւմուտքից՝ Տուրուբերան նահանգներին։ Տարածւում էր Արածանի գետի վերին աւազանում, Մաղկանց (Ալաղաղ) լեռների լանջերին, որտեղից սկիզբ է առնում Եփրատի ամենամեծ լոտակը՝ Արածանին։ Մաղկոսնի հարաւային մասում ձգւում են Մաղկանց, իսկ հիւսիսում՝ Դիմաղինի լեռները։ Եղել է հայ թագաւորների եւ իշխանների ամառանոց...»<sup>12</sup>։

«Գաւառի նշանառը բնակավայրերից էին Զարեհաւանը, ... Շահապիւան աւանն ու վանքը, որտեղ գումարուում էին աշխարհաժողովները եւ կատարուում Նաւասարդի տօները, Անգղ բերդը եւ քաղաքը՝ 10-11-րդ դարերից յետոց Մաղկոտնը այլեւս որպէս գաւառ չի յիշատակուում»<sup>13</sup>։

Հետաքրքիր է, որ լեռնաշղթալի անունը նոյնական է ոչ թէ ամենաբարձր (Թոնդրակ), այլ երկրորդ գագաթի (Մաղկէոյ) անուան հետ։ Կարծում ենք, այսոնք մի կարեւոր նրբութիւն կայ։ Թոնդրակը գործող հրարուխ է մինչեւ այսօր։ Արատայի ժամանակներից մեզ բաժանում է առնուազն 4800 տարի։ Այդ ընթացքում լեռը բազմից ժամանակներում ամենաբարձր գագաթը մեծ հաւանականութեամբ եղել է հինգ Մաղկէոյ լեռը, որն այսօր երկրորդն է։ Մեր ազգիւրներում շփոթ կայ։ Ըստ հանրագիտարանի, բարձրութեամբ երրորդ գագաթն է (Նպատը) կոչում Ալաղաղ, իսկ ըստ ՀՀՇՏԲ-ի, Ալաղաղ է կոչում երկրորդ գագաթը (=Մաղկէոյ լեռը)։

Ի՞նչ ենք մենք տեսնում այս տարածքում։

ա) Արածանիի ակունքը, որ պաշտամունքային տարածք է (այսոնք, ըստ տեղացիների պատկերացումների, եղել է դրախտը)։

բ) Շահապիւան, որ է «բանակատեղ Հայոց թագաւորաց»։ Այսինքն՝ թագաւորները, որքան էլ տարբեր մայրաքաղաքներ ու աթոռանիստներ ունենան, միեւնոյն է, ամունը այսոնք են։ Սա ամառային նստավայր է, որտեղից կառավարում է երկիրը։

գ) այսոնք են հրաւիրում աշխարհաժողովները։ Այսոնք են ընդունուում կրօնական-եկեղեցական օրէնքներ եւ կանոններ։ Ժամանակակից լեզուով՝ այսոնք է «օրէնադիր մարմինը» (հմմտ.

<sup>12</sup> Հայկական Սովետական հանրագիտարան, ՀՀ, էջ 112։

<sup>13</sup> ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 838։

Արատտա-«Սուրբ օրէնքների երկիր», կամ «Աստուածների ժողովի երկիր (լեռ)»):

դ) այստեղ է բանակի ամառանոցը: Այսինքն, եթէ չկայ պատերազմ, սա զօրքի հիմնական բանակատեղին է ամառային շրջանում:

ե) այստեղ է մեծ շուքով նշում պետական ամենամեծ տօնը՝ Նաւասարդը: (Հմմտ. «սուրբ ծէսերի երկիր»: ՄԵ գաղափարագիրը կարելի է թարգմանել եւ «օրէնք» եւ «ծէս, կարգ»): Նպատը Ծաղկանց լեռներ լեռնաշղթայի լեռ է: Նրա արեւելեան լանջերը Ծաղկուն գաւառում են, իսկ արեւմտեան լանջերը՝ Բաղրեւանդում:

զ) այստեղ հայերը մկրտուեցին իբրեւ նորագարձ քրիստոնեաներ Արածանիի ջրերում:

Մասնագիտական գրականութեան մեջ Արատտա տեղանունը կապուել է Արարատ տեղանուանը<sup>14</sup>: Եթէ այս կարծիքը ճիշտ է, ապա Արատտա երկրի մեր տեղորոշումը սրան չի հակառակ, որովհետեւ Ծաղկանց լեռները եւ Ծաղկուն գաւառը Այրարատ նահանգում են: Այս դէպքում Արատտա=Արարատ=Այրարատ նահանգ: Բայց մենք աւելի հակուած ենք Արատտա տեղանուան մէջ տեսնել Արած-անի գետանունը (տ-ծ տարբերութեան համար հմմտ. արած-ել-արաւտ): Ցիշենք, որ Եփրատ գետի անունը Ասորեստանեան որոշ պատմական արձանագրութիւններում գրւում է նաև A.RAT ձեւով<sup>15</sup>, որ, ըստ մեզ, նոյն Արած-անի գետանունն է: Նոյն Եփրատը Սուրբի երկրում (ըստ ոմանց խուռիերէն) կոչւում է Աշ-րա-ստ-տս<sup>16</sup>: Արատ եւ Օրոս ձեւերը արտասանական, հընչերանգային տարբերութիւններ են՝ գետանունը նոյնն է:

Տոպոնիմիկայում սովորական երեւոյթ է, երբ գիւղի, քաղաքի անուամբ կոչւում է գետը կամ հակառակը, գետի անուամբ կոչւում է բնակատեղին: Նոյն երեւոյթը առկայ է նաև լեռների պարագայում, երբ քաղաքը կոչւում է այն լեռան անուամբ, որի լանջին գտնուում է: Քանի որ Արատտան կոչւում է Արատտա քաղաքի երկիր (URU Aratta KI), իսկ սեպախումբը

<sup>14</sup> ԱՐԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ, «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարմանակում (ըստ գրաւոր աղբիւրների)», էջ 20:

<sup>15</sup> Br Ignace F. Gelb, «Hurrians and Subarians», Chicago, page 98.

<sup>16</sup> Անդ՝ page 21:

ներկայացնում է «ծաղկելեն(ներ)», ապա Արատտա անունը կարող էր պահպանուել նաեւ իռուան կամ լեռների անուններում<sup>17</sup>:

Բերկրի գետանունը տառացիօրէն հայերէն բերկրիլ-«ուրախանալ, հրճուիլ, զուարձանալ» բառն է: Իսկ զուարժանալ զրարարում նշանակում է: «Լ.զրանիլ, ուրախութիւն անել, ուրախանալ, 2.ուրծանալ, կանաչիլ, ծլիլ, ծաղկիլ»: Բերկրի գետանունը նոյն համատեքստում է, ինչ lam-ծլել, ծաղկել-ը:

Aratta<sub>2</sub> նշանը կազմուած է LAMxKUR.RU սկզբունքով, որտեղ LAMxKUR-ը իրեւ հասարակ անուն, նշանակում է (Փրանսերէն) «vaincre-յաղթել, յաղթահարել, նուաճել»<sup>18</sup>: Այս դէպքում սեպախումբը կարգում են IŠ<sub>11</sub>: Արատտան, փաստօրէն մի երկիր է, որ կոչում է ե՛ւ «ծաղկել-լեռներ» եւ յաղթ(ել): Շումերները զրում են միայն բառի արմատը, որ կարող է ունենալ ե՛ւ բայական իմաստ (ծաղկել, յաղթել), ե՛ւ գոյականական իմաստ (ծաղիկ, յաղթանակ), ե՛ւ ածականական իմաստ (յաղթ): Արատտա երկիրի միւս անունն է «յաղթել, յաղթ, յաղթանակ»: Նրանք գըրում են IŠ<sub>11</sub>, ըստ՝ =յաղթել, յաղթանակ, յաղթ երկիր եւ հասկանում են Aratta<sub>2</sub>: Յիշենք, որ զրարարում նպատակ բառը նշանակում է «յաղթանակ, յաղթութեան մըցանակ»<sup>19</sup>: Մաղկանց լեռները նոյն Նպատ, Նպատակ կամ Նպատական լեռներն են: Լեռնաշղթան կոչում է նաեւ Նպատ<sup>20</sup> գագաթի անուամբ: Նպատ լեռը վրա-

<sup>17</sup> Ծաղկանց լեռները լեռնաշղթայի միւս անունն է Ալադալ: Մենք չենք բացառում, որ այս անունը կարող է լինել չէնց Արատտա, Արադա անունն է: Թուրքերէնին բնորոշ է տեղանունների ար-ը հնչեցնել ալ: օրինակ Արագած-Ալադեալ: Արատտա անունը կարող էր գառնալ Ալադա: Բաւագրէշի դի-ի յաւերումը արդինք է ժողովրդական սառւզարանութեան թուրքերը բառը հասկացել են գաղ-«սար, իռո» իմաստով: Դադ մասնիկը կարող էր զրուել նաեւ բառի վրայ (հմմտ. Հայք. Միփան, թուրք. Միփան-գաղ). Արատ-գաղ=Ալադալ:

<sup>18</sup> René Labat, «Manuel d'Epigraphie Akkadienne», Paris 1976, էջ 197, սեպանշան N 436:

<sup>19</sup> ՀԲ. ԱշԱՌԵՍՆ, «Հայկելն արմատական բառարան», Հ. 3, էջ 475.

<sup>20</sup> Նպատ լեռնանունը պէտք է կապել խուռական զիցանուան հետ, որ վկայուած է Յ. Ճեւով Նուպատիկ, Նուրադիգ և Լուրադագա (լ-ն տարբերութիւն համար հմտութեան նպատակ-դապատակ): Մրանք հայերէնում կանոնաւորացէն պիտի առյին նպատիկ, նպատակ, նպատ ճեւերը:

ցական աղբիւրներում կոչում է նպատակ<sup>21</sup>, որ պէտք է համարել աւելի հին ու անազարտ ձեւ: Արատապի շումերական երկու անուններն իմաստով շատ տարբեր են, բայց խօսքը նոյն երկրի մասին է: Երկու անունն էլ մեզ տանում են նոյն տեղը, որովհետեւ նոյն լեռնաշղթան կոչում է ե'ւ Մաղկանց ե'ւ Նպատական (լեռներ):

Ի՞նչ ենք արել մենք Արատա երկիրը տեղորոշելու համար: Պարզապէս թարգմանել ենք շումերերէն ԼԱՄ եւ ԼՇ<sub>11</sub> նըշանները: Երբ սրանց իմաստները հնչեցնում ենք հայերէն (գրաբար), ստանում ենք Մաղկել լեռներ եւ Նպատակ լեռներ:

### Եզրակացութիւն

Aratta=ЛАМxКУР.RU=«Ճաղկել-լեռ(ներ)»=Մաղկանց լեռներ, Մաղկէոյ լեռ, Մաղկոստն գաւառ

Aratta<sub>2</sub>=ԼՇ<sub>11</sub>=«յաղթել, յաղթանակ»=«նպատակ»=Նպատակ (Նըշան) լեռ, Նպատական լեռներ = Մաղկանց լեռներ

Aratta=\*Արատ-դադ=Ալադադ = Մաղկանց լեռներ

Aratta=Արած-անի = Մաղկանց լեռներ = Արածանիի վերին հոսանք, Արածանիի ակունքը:

Aratta=E-re-ti-a = լեռ Վանայ լճից հիւսիս՝ Մաղկանց լեռներում:

Մեր կարծիքով, չե կարելի անուշադրութեան մատնել այն փաստը, որ պատմական Հայաստանի տարածքում կայ ե'ւս մի լեռնաշղթայ Մաղկանց լեռներ անուամբ, որ կոչում է նաև Մաղկաւէտ լեռներ:

«Մաղկաւէտ, Մաղկանց լեռներ, Մաղկէ, Մաղկեայ լեռ, Խաչափայտ, Խաչափայտի լեռներ – «Լեռնագագաթ եւ լեռնաշղթայ Հայկական լեռնաշխարհում, Անտիպոնստական լեռնահամակարգի արեւելքան մասում, իրզումի դաշտից հիւսիս, Արեւմտեան Եփրատի եւ Թորթումի ջրբաժան շրջանում, Ճորոխի եւ Արեւմտեան Եփրատի միջնեւ: Զգուելով հիւսիս-արեւելքից հարաւ-

<sup>21</sup> ՀՀՇԾԲ, հ 4, էջ 34: Հայերէնում կան իկ եւ ակ վերջածանցներ. Ապատակ բառի մէջ հայը ենթադրել է ակ վերջածանց, որ կարելի է զանց առնել, վրացին չունի ակ վերջածանց եւ լեռնանունը պահել է անփոփոխ:

արեւմուտք՝ միանում է կենտրոնական Տաւրոսի ճիւղերից մէկի՝ Անտիտաւրոսի հետ: ...Մաղկաւէտի հարաւում գտնվում է իգդասոր կիրճը (500-700մ խորութեամբ): Այստեղից սկիզբ են առնում Արեւմտեան Եփրատի, Ճորոխի եւ Թորթումի ակունքները: Ենուան հարաւային ստորոտներին, մօտ 2600մ բարձրութեան վրայ կայ մի քարէ աւազան: Այստեղ հաւաքւում է աղբիւրի սառն ու քաղցրահամ ջուր, որից գոյանում է Եփրատի մի յորդարուխ ակունքը: Հստ աւանդութեան՝ այդ սուրբ աղբիւրը գոյցել է բիւզանդական Հերակլ կայսեր ձեռքով փրկուած իսչափայալը գետնից գուրս քաշելու պահին: Աւանդութեամբ էլ բացատրում են ինուան նաեւ իշաչափայա, իսկ մօտակայ վանքի՝ ու իշաչ անունները»<sup>22</sup>:

Պարզ է, որ Եփրատի ակունքն աւելի հին է քան Հերակլ կայսրը, բայց աւանդութիւնը մատնում է, որ մենք գործ ունենք սպաշտամունքային ակունքի հետ, որին վերապրում է աստուածային միջամտութեամբ ծագում:

Այսպիսով, Արեւմտեան Եփրատի ակունքների լեռները կոչում են Մաղկանց լեռներ, գագաթը՝ Մաղկէ լիռ, իսկ Արեւելքան Եփրատի, որ է Արածանի, ակունքները գտնվում են մի լեռնաշղթայում, որ նոյնական կոչւում է Մաղկանց լեռներ: Ակընյայտ է, որ մենք գործ ունենք նոյն պատկերացումների եւ աշխարհնկարման հետ: Հայկական լեռնաշխարհի այս երկու հսկայ գետերի ակունքներում գտնուող լեռները նոյն անունով (Մաղկանց եւ Ռակի) կարող էին կոչել նոյն մարդիկ: Երկու դէպքում էլ մենք գործ ունենք նոյն կոծնական հայեացքի (նաեւ լեզուամտածողութեան) հետ: Յաւելինք նաեւ այն փաստը, որ երկու գետերի ակունքների շրջանն էլ կոչւում են Ռակի(ք), Ռակեանք: Արեւմտեան Եփրատի ակունքի շրջանում Մաղկաւէտ լեռներում է գտնվում Ռակեանց լեռ(նագագաթ)ը<sup>23</sup>, իսկ Ռակի լեռները նոյնն են, ինչ Դրախտ լեռ(ներ)ը Արածանիի ակունքներում<sup>24</sup>:

Մենք խիստ հաւանական ենք համարում, որ Արատանը ընդգրկել է նաեւ այս Մաղկաւէտ լեռների տարածքը: Արատանայի կազմում ընդգրկուած է եղել Հայկական Տաւրոսի առնուազն որոշ հատուած (եթէ ոչ ամբողջ լեռնաշղթան): Արա օգ-

22 ՀՀՇՏԲ, հ 2, էջ 836-837:

23 ՀՀՇՏԲ, հ 4, էջ 176:

24 Անդ:

տին է խօսում այն փաստը, որ աստղային երկնքում Արատտա երկիրը մարմնաւորում է Յուլի (Եզն) համաստեղութիւնը։ Վերջինս շումերական աղբիւրներում գրւում է GU<sub>4</sub> «ցուլ, եզ, խոչոր եղջերաւոր անստուն» նշանով, որ ունի ճարագ, dipar ընթերցումներ։ Դեռեւս գերմանացի հանճարեղ լեզուարան Կարստն է այս ճարգ՝ նոյնացրել հայերէն տաւար, տուար, դուար բառի հետ<sup>25</sup>։ Արատտա երկիրը կարող էր կոչուել նաև Տաւար-Տաւրոս, միայն այն դէպքում, եթէ ընդգրկէր Տաւրոսի լեռնաշղթայի առնուազն մի մասը։

Արատտա երկրի հաւանական տարածքը, որ Արտակ Մովսիսնանն առաջարկել է իր գրքում<sup>26</sup>, մեզ համոզիչ է թւում, իսկ Արատտայի հոգեւոր-քաղաքական կենտրոնը, ըստ մեզ, պէտք է փնտրել Մաղկանց, (կամ որ նոյնն է) Նպատական լեռներում։

### Նախկին մի տեսակետի մասին

Նախկինում կարծիք է յայտնուել, որ Շումեր-Արատտա ցամաքային ճանապարհն իբր անցել է Սուզա եւ Անշան երկրներով<sup>27</sup>։ Դրա համար հիմք են ծառայել «Էնմերքարը եւ Արատտայի գերագոյն քուրմը» վիպերգի 166-167-168 տողերը (աւելի ճիշտ՝ այդ տողերի թարգմանութիւնը, ըստ որի «Սուզային եւ Անշան երկրին նա (դեսպանը) խոնարհուեց կրտսեր երգչի նըման»)։ Արտակ Մովսիսնը հերքել է այդ կարծիքը՝ ենթադրելով հետեւեալը. «...Վիպերգերի մեզ հասած բնագրերի գրի առնելու ժամանակաշրջանում (Ք. ա. 20-18դդ) Շումերը գրտնուել է էլամական արքաների տիրապետութեան տակ եւ էլամական երկրամասերին «խոնարհուելը» կարող էր եւ լինել այդ տիրապետութեան արտայայտութիւն»<sup>28</sup>։ Մենք լիովին համաձայն ենք Արտակ Մովսիսնի հետեւեալ եղբակացութեան հետ. «Սուզայի և Անշան երկրի յիշատակութիւնը կապ չունի նաև պարհի ուղղութեան հետ եւ չի կարող կուռան հանդի-

<sup>25</sup> ՀԲ. ԱՃԱՌԵՑԱՆ, «Հայերէն արմատական բառարան», չ. 4, էջ 424:

<sup>26</sup> ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ, «Հնագոյն պետութիւնը Հայաստանում. Արատտա», Երեւան 1992, էջ 23:

<sup>27</sup> ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ, «Հնագոյն պետութիւնը Հայաստանում. Արատտա», էջ 18-21:

<sup>28</sup> Անդ:

սանալ Արատտայի տեղադրութեան հարցում»<sup>29</sup>: Մեր համաձայնութիւնն ունի լրացուցիչ, ոչ պակաս կարեւոր պատճառ:

Բանն այն է, որ քննուող տողերի նախկին թարգմանութեան մէջ կայ սկզբունքային սխալ: Այժմ ճշտուած է այս հատուածի քերականութիւնը: Պարզուում է, որ ո՞չ թէ զեսպանն է խոնարհուում այդ երկրամասերին, այլ Սուզան եւ Անշան երկրներն են «խոնարհուում» ինանա դիցուհուն: Սուզան եւ Անշանը այս նախադասութեան մէջ ենթականեր են: Նախորդ տողերում յիշատակուած զեսպանը ոչ մի կապ չունի սրա հետ: Նոր ճշտուած թարգմանութիւնը, որ կատարել է Herman Vansiphout-ը հետեւեալն է:

166. Šušin<sup>ki</sup>-e KUR an-ša<sub>4</sub>-an<sup>ki</sup>-a-še<sub>3</sub>

=Šušin and the land of Anšan-Շուշին-ը (եւ) Անշան երկիրը

167. peš<sub>2</sub> TUR gin<sub>7</sub> kiri<sub>3</sub> šu mu-na-ab-gal<sub>2</sub>

=Saluted her humbly, like small mice<sup>30</sup>-ողջունեցին նրան խոնարհարար փոքր մկների պէս:

Թարգմանութեան մէջ անգլերէն her-«նրան» իգական է եւ վերաբերում է 163-րդ տողում յիշատակուող ինանա դիցուհուն: Որ էլամական երկրամասերում եղել է ինանա դիցուհու պաշտամունք, ոչ ոք կասկածի տակ չի առել, բայց սա կապ չունի զեսպանի երթուղու հետ: Դեսպանի «խոնարհուելն» այս երկրամասերին արդիւնք է թիւրիմացութեան եւ սխալ թարգմանութեան:

Նոր թարգմանութիւնը նախորդից տարբերում է նաև նրանվ, որ թէ ՏUR բառակապակցութիւնը նախկինում թարգմանուել էր «երգիչ կրտսեր (փոքր)», նորում մնել տեսնում ենք «մուկ (մկներ) փոքր»: Բանն այն է, որ թէ նշանն ունի «կրծող, մուկ» և «երգիչ» իմաստ: Մնեն կարծում ենք, որ նիշա թարգմանութիւնը պէտք է լինի «մանուկ երգիչ»: Աստուածութեանը մանուկ երգիչների նման ողջունելը (պաշտօն մատուցելը) համեմատելի է Յիսուսին ողջունելու (Երուսաղէմ մտնելիս) տեսարանի հետ: Թէ նշանն ունի gilim<sub>2</sub>, gi-

<sup>29</sup> Անդ:

<sup>30</sup> Herman Vansiphout, Epics of Sumerian kings. The Matter of Aratta. Atlanta, 2003, pages 64-65.

lin, gilili, ge<sub>19</sub>, լնիքերցումներ, որ ներկայացնում են «երգել» խմասոր (հմմտ. նաև gala եւ gala<sub>10</sub>-singer-երգիչ): Այսուղ պէտք է տեսնել հայերեն գեղ-«երգ» բառը, որից գեղգեղել-ել-«երգել», գեղ-օն-«երգ»<sup>31</sup>:

## KUR

Արատտայի անունը դրելու բոլոր տարրերակներում առկայ է KUR գաղափարագիրը, որ նշանակում է «երկիր, աշխարհ (երկրամաս), լեռ(ներ)»: Այս գաղափարագիրը, ընդհանրական իմաստ ունենալով հանդերձ, որոշակի համատեքստերում նշանակում է շատ կոնկրետ, որոշակի երկիր. այսինքն՝ «լեռնաշխարհ» ասելով՝ հասկացել են հէնց Հայկական լեռնաշխարհը. օրինակ՝ ծիրան պտուղը շումերերէն (ուշադրութիւն. ո՛չ աքաղաղերէն) գըրուած կա ar-ma-nu ձեռով<sup>32</sup>: Յաւօք, յայտնի չէ վկայման ժամանակը (գոնէ PSD-ն չի բերում): Մրա համարժէքն է <sup>թէ</sup> hašhur kur.ra= <sup>ծառ</sup> ինձոր KUR-ի=ar-ma-nu: Վերջին րա նշանը սեռ.ար. հոլովի վերջաւորութիւն է: Այս համատեքստում KUR-ը համարժէք է Ar-ma-nu-ին<sup>33</sup>: Աւելին՝ Kur նշանն ինքը ունի raman/ramanu ընթերցումներ, ինչը յատակօրէն ցոյց է տալիս, թէ որոշակի համատեքստում «լեռնային երկիր» գաղափարագիրը նշանակում է հէնց Arman(u) երկիր: Շումերերէնում որեւէ այլ սեպանշան չունի նման ընթերցում (գոնէ ըստ PSD-ի), բայց, կարծում ենք, եղածն էլ քիչ չէ<sup>34</sup>:

Փաստօրէն, ծիրանի լատիներէն անունը (եզրը), բառացի թարգմանութիւնն է շումերական եզրի: Ուրեմն՝ չպէտք է զար-

<sup>31</sup> ՀԲ. ԱՃԱՌԵԱՆ, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 534.

<sup>32</sup> <http://psd.museum.upenn.edu/epsd/nepsd-frame.html>

<sup>33</sup> Ի դեպ կայ վկացուած <sup>թէ</sup> hašhur kur.de-լաւ - «մրգառու ծառ»: Այսուղ մենք տեսնում ենք դեղ-ձ բառը, որի ձ-ն ուշ աճական է. բուն արմատն է դեղ, որից դեղ-ին, դաղ-ձ, դեղձ, դեղձ-ան-իկ եւ այլն: Այստեղ (դեղձի դէպում) կր-ն ունի նոյն արժէքը, ինչ «ծիրանի» դէպում:

<sup>34</sup> Որ շումերական KUR գաղափարագիրի տակ կարող է նկատի առնուել Հայկական լեռնաշխարհը եւ հէնց Արատտան, նշուել է նաև Համբետ Մարտիրոսանի կողմից: Տե՛ս «Աստուածաշնչական Հայատան», Երեւան, 2005թ. էջեր 52-63. «Աշխարհաբարման աստուածաշնչան առասպելի ակունքները եւ Հայատանը»:

մանալ, որ լատիներէն «Հայկական քար»-լաջվարդի անունը լինի նոյն շումերական եզրը, այսպէս.

hašur kur.ra = խնձոր KUR-ի= ar-ma-nu=հայկական խնձոր,  
za (քար) KUR= քար հայկական=լաջվարդ:

Վերջին կոմքինացիայի համատեքստում KUR-ն ունի նոյն արժէքը, ինչ «Ճիրան» եզրի պարագայում, այսինքն՝ նշանակում է Ar-ma-nu:

Za-kur համաղրութիւնը կարդում են za-gin<sub>3</sub> (kur նշանն ունի gin<sub>3</sub> եւ kin<sub>3</sub> բնթերցումներ): Ալստեղ պէտք է տեսնել Հայերէն q-ակն (= za-gin<sub>3</sub>) -«գոհար, թանկագին քար» բառը: Այս բառն աքքաղերէն գրում է սզո՞ս, որ մենք համարում ենք Հայերէն ակն (յոդն. ակուն-ք) բառից կատարուած փոխառութիւն<sup>35</sup> (հմտ. ակն զանի, զանակն, ակն ըրիբեղ): Արեւելասեմական ցեղերը չեին կարող յատուկ եզր ունենալ չեռաւոր լեռնային երկրից բերուող խիստ իւրայստուկ հանքատեսակի համար: Նրանք այդ բառը (եզրը) պիտի փոխառէին չումեներից, ինչպէս փոխ են առել աստղագիտական, դիցարանական, բուսական եւ այլ կարգի բազմաթիւ եզրեր:

Ի գէպ, ամենեւին էլ պարտադիր չէ, որ za.gin<sub>3</sub> սեպախում-ը նշանակի միմիայն «լաջվարդ»: Սա նշանակում է նաև լաջվարդի նման կապոյն ցանկացած (կիսա)թանկարժէք քար. օրինակ՝ za.gin<sub>3</sub>.KUR.ra-«գ-ակն KUR-ի» նշանակում է «mineral bleu-կապոյն հանքանիւթ, teinture bleue-կապոյն ներկանիւթ»<sup>36</sup>:

### Կող (Կողովիս)

Ծաղկանց լեռները միայն Ծաղկուն գաւառով չեն սահմանափակում: Ծաղկունի անմիջական հարեւանն է, ուր տարածում են Ծաղկանց լեռները, Կող կամ Կողովիս գաւառը: Այս

<sup>35</sup> Աքքաղերէնում բնիկ Հայերէն բառի առկայութիւնը չպէտք է արտառոյ համարուի. Հմտո, աքքաղ. ըրս-եփ-ոյ-«եփել, թիսել», որ դրաւած է չում. տիհ-«թիսել, եփել, ու եաք» բառի գէմ: Հայերէն եփ-ոյ-ն ունի բազմաթիւ եւ յուսալի հնդեւրազական գուգահեռներ, իսկ բանարէն ցեղակիցը գրեթէ տառացի նայութեամբ կայ յունարէնում. տե՛ս Հր. Անառիկ, հ 2, էջ 72:

<sup>36</sup> René Labat, «Manuel d'Epigraphie Akkadienne», էջ 241, սեպանշան N 586:

տեղանուան ամենահին յիշատակութիւններից մէկը, եթէ ոչ ամենահինը, պատկանում է Բուգանդին, որ գաւառը կոչում է Կոգ («Հովիտ անուանեալ ի Կոգ գաւառի»)<sup>37</sup>: Այս տեղանուան մէջ պէտք է տեսնել շումերերէն KUG բառը.

KUG - (to be) pure-«(լինել) սուրբ», աքքաղ. *ellu* "(ritually) pure"-«ծիսականօրէն մաքուր»,

KUG - (to be) bright, shiny-(լինել) պայծառ, փայլուն,

KUG - precious metal-թանկարժէք (ազնիւ) մետաղ,

KUG-gi -gold-ոսկի,

Du<sub>6</sub>-kug -"a cultic and cosmic place"-բլուր (լեռ) Կոգ-պաշտամունքային եւ տիեզերական տեղ (վայր)=սրբազն լեռ:

Այս KUG բառի հայերէնն է կոկ<sup>38</sup>-«ողորկ, հարք».

կոկ-ել-«սրբել, մաքրել», (հմմտ. շում. սուրբ)

կոկ-ել-«ողորկել, հարթել»,

կոկ-ել-«զարդարել, պճնել»:

Ե'ւ KUG-«սուրբ»-ը, ե'ւ KUG-gi-«ոսկի»-ն, ե'ւ DU<sub>6</sub>-լեռ, բլուր KUG-պաշտամունքային, տիեզերական վայր»-ը մեզ տանում են Կոգ գաւառ: Յիշենք Ծաղկանց լեռների հիւսիսային հատուածի մասին կարեւոր վկայութիւն. «Դրախտ, Ռոկի, Ռոկիք-Լեռ (լեռներ) Մեծ Հայքի Ալրարատ աշխարհի Ծաղկոտն գաւառում, Ծաղկանց լեռներում: Հստ Զ. Ալիշանի Դրախտ է կոչուել Ծաղկանց լեռների հիւսիսային մասը, որտեղ գտնւում էր Ռոկի կամ Ռոկիք վայրը՝ Արածանիի ակունքի շրջանը»<sup>39</sup>:

Քանի որ Դրախտ լեռները գտնւում են Ծաղկանց լեռների հիւսիսային մասում, ապա նրանք մասամբ պիտի մտնեն Ծաղկոտնի հիւսիսային հարեւան Կոգ գաւառի տարածք:

<sup>37</sup> ՓԱՀԱՏՈՒ ԲՈՒԶԱՆԴԻ, «Հայոց պատմութիւն», Երեւան 1987, էջ 169.

<sup>38</sup> ՀԲ. ԱՃԱՌԵՍԱՆ, Հայերէն արմատական բառարան, Հ. 2, էջ 617: Հայերէնում կ եւ գ բարձաձայները ազդել են միմիկանց վրայ եւ բոլոր բարբառներում ունենք կամ կուկ, կոկ կամ գուգ, գոգ: Միայն Մուշի բարբառն է ճըշտիւ պահել կօգ ձեւը:

<sup>39</sup> ՀՀՇԾԲ, Հ. 2, էջ 149:

### Անգլ

Ծաղկուտն գաւառում վկայուած էն քաղաք, ամրոց, վանք  
եւ լեռ Անգղ անուամբ<sup>40</sup>:

Մենք կարծում ենք, որ Անգղ անունը պէտք է կապէլ Անգղ դիցանուան հետ, որ շումերական Ներգալ աստծոյ համարժէքն է: Միջազգետքեան աւանդոյթում Ներգալը մոլորակներից նոյնացւում է Մարսի հետ<sup>41</sup>: Սա ծանրակշխո փաստարկ է յօդուա այն ենթադրութեան, որ Ներգալ-Անգեղն ունեցել է նաեւ ռազմական գործառոյթներ: Ցանկացած բերդ առաջին հերթին ռազմական կառոյց է, եւ բնական է, որ նա կրի ռազմի աստծոյ անունը: Բերդերն ու ամրոցներն առաջին հերթին կարիքն ունեն Անգղ աստծոյ հովանաւորութեան:

Ծաղկուտն գաւառում Անգղ անուամբ քաղաքի, բերդի եւ լեռան առկայութիւնը կուտան է յօդուա այն ենթադրութեան, որ այստեղ եղել է Ներգալ-Անգեղ աստծոյ պաշտամունք:

Ասուրական աղբիւրներում վկայուած է NI.BAD-ա-ս աստուած: Միարժէքօրէն գրուած է: <sup>d</sup>Si-mu-ud (=<sup>d</sup>Nergal) (=<sup>d</sup>NI.BAD-ա-ս)<sup>42</sup>: Այստեղ մենք տեսնում ենք Նպատ դիցանունը: Նպատը որոշակի ժամանակային եւ տարածքային համատեքստում գուշաց դրուելնոյնացւուել է Ներգալի հետ: Նոյն գաւառում կողք-կողքի մենք տեսնում ենք եւ Նպատ պաշտամունքային լեռ, եւ Անգղ յեռ, քաղաք, բերդ: Եւ Անգեղը, եւ Նպատը գուզազրւում են Ներգալին իրեւ համարնոյթ աստուածութիւններ:

Ծաղկունի Անգղ գիւղաքաղաքը յատակ տեղորոշուած չէ: Հաստատ է միայն այն, որ գտնուել է Արածանի գետի ափին: Սա հէնց այն Անգղն է, որտեղ տեղի ունեցաւ առաջին լուրջ զինուած բախումը պարսից մոգերի եւ հայերի միջեւ: Այս մասին Եղիշէն գրում է. «Խակ գունդյն Հայոց ամենայն օգնականօքն հանդերձ մողացն բազմութեամբ յամսեանն չորրորդի եկին հասին եւ մողացն բազմութեամբ յամսեանն չորրորդի եկին հասին»

<sup>40</sup> Ղափանցեանը հայկական Անգղ տեղանունները բացատրում է նրանով, որ անգղ բառը կարող էր նշանակել պարզապէս «բերդ, ամրոց»: Նա ենթա անգղ բառը կարող էր նշանակել պարզապէս «բերդ, ամրոց»: Նա ենթա անգղ բառը կարող էր նշանակել պարզապէս «բերդ, ամրոց»: Այս մասին Եղիշէն գրում է. «Խակ գունդյն Հայոց ամենայն օգնականօքն հանդերձ մողացն բազմութեամբ յամսեանն չորրորդի եկին հասին եւ մողացն բազմութեամբ յամսեանն չորրորդի եկին հասին»

<sup>41</sup> Բ. Վան-դեր-Վերդեն, «Пробуждающаяся наука 2. Рождение астрономии», стр. 68.

<sup>42</sup> P. Anton Deimel S. I. Pantheon Babylonicum. Rom, 1950, էջ 31, սեպանչան N 188:

յաշխարհն Հայոց, ի գիւղաբաղամ մի մեծ՝ որում անուն էր Անգղ: Բանակեցան, բոլորեցան, զետեղեցան եւ ամենայն կողմանց անդը ժողովեցան, եւ էին անքի բազմութիւն:

Եւ եղեւ յետ աւուրց քանի եւ հնգից մոգպետն ինքնին մոգօն հանդերձ հասանէր մեծաւ գօրութեամբ՝ քակել զդրուն եկեղեցւյն յաւուր միաշարաբուն. զփորձ առնուլ կամեր զառաջարկութեան զործոյն: Խոկ սուրբն Ղեւոնի երեց միարանութեամբ առաջին խորիրդակցօն եւ բազում ուխտի ի տեղուց անդ պատրաստական դիպեցաւ: Քանզի վիրզս ի ձեռն առեալ՝ զկառափուն մոգան եւ մոգպետին շարդեցին. փախտական յիւրաշանչիւր վանս արկանէին, եւ ինքեանի ըգպաշտուն բարձրացուցեալ յեկեղեցւոչն՝ զուրունական կանոնն կատարէին, մինչեւ ի նոյն միաշարաբին անդադար լինելով»<sup>43</sup>:

*Հայերին դաւանափոխ անելու ծրագրով պարսից մոգպետը զալիս է հէնց այս վայրը: Սա կարող է լինել պատահական՝ այն իմաստով, որ Պարսկաստանից դէպի Հայաստանի խորքը գնացող մոգպետը կարող էր ընտրել այլ երթուղի, եւ բախումը կարող էր տեղի ունենալ այլ վայրում: Բայց եթէ աշխարհագրական այս կէտը պատահական չէ, եւ մոգպետը լաւ գիտէր, թէ ուր է գալիս, եւ Անգղի վանքը յատուկ ընտրուած էր որպէս առաջին թիրախ, ապա սա հէտաքրքիր է: Առաջին թիրախը լինելու պատիւն ամէն դէպքում պատկանում է Ծաղկուն գաւառի Անգղ վանքին: Սա նշանակում է, որ այստեղ մենք գործ ունենք Հայոց դաւանանքի եւ սրբազն աւանդոյթի հետ կապուած մի բացառիկ կարեւոր կէտի հետ: Մոգպետը զալիս է այստեղ, որովհետեւ այստեղ կարող էր հարց լուծուել: Նման հարցերը այստեղ են լուծուում: Դատելով Եղիշէի բերած զրուագից՝ Հայերն ունեն յատակ դիրքորոշում, որն արտայայտում են աւելի քան միարժէքորէն: Մեծ հաշուով հարցն այստեղ էլ լուծուել է:*

### KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-ni Aratta<sup>ki</sup>

«Էնմերքարը եւ Արատտայի գերագոյն քուրմը» վիպերգի 437-րդ առղում զրուած է KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni Aratta<sup>ki44</sup>: Կանեւան «KUR ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni» հատուածն ընդհանրապէս բաց է

<sup>43</sup> Եղիշէ, «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», էջ 167, երրորդ յեղանակ, տող 4-22:

<sup>44</sup> Herman Vansiphout, Epics of Sumerian kings. The Matter of Aratta. Atlanta, 2003, page 80.

թողել, չի թարգմանել, տեղը դրել է կախման կէտեր, իրը անհավանալի, անթարգմանելի հասուած. «(Կանեւայի մօտ տողերի համարակալումը 1-ով տարրերում է. այստեղ՝ տող 438) ուժուածութեան քաղաքացիութեան համար անուան հետ, որ Արարատ կամ Արարատ անուան է: Արարատ կարծում ենք, որ այստեղ ի դէմս Արշակունիա-նի բառի, մենք գործ ունենք յատուկ անուան հետ, որ Արարատ կամ Արարատ անուան է: Արարատ կարծում ենք հետեւեալն են:

Քննուող վիպերգում երկրների անունները գրւում են հէնց այսպէս «KUR+տեղանուն»: Այս դէպերում KUR-ը կարելի է հասկանալ ե՛ւ որպէս գետերմինասիւ, ե՛ւ որպէս զաղափարազիր: Մէր արդէն բերած օրինակում (տող 166) KUR ան-չաց-ան<sup>45</sup> թարգմանուած է «the land of Anšan- Անշան երկիրը»: Թուում էր, թէ նոյն սկզբունքով թարգմանիչն այստեղ պիտի թարգմանի KUR Արշակունիա-նի բառի մէջ՝ յայց թարգմանիչն այստեղ (Արշակունիա-նի բառի մէջ) ենթագրել է բայ անդ-յերէն to dart-«նետուել, ոստել, ցատկ կատարել» իմաստով:

Արշակունիա-նի բառ չկայ չումերերէնի ոչ մի բառարանում: Օքսֆորդի եւ Փենսիլվանիայի համալսարանների կայքերում, որտեղ պարբերաբար թարմացւում են բառարանները, եւ զգալի թուույնոր հրապարակումներ են լինում, նոյնպէս չկայ նման բառ: Բառի չգոյութիւնն է պատճառը, որ Կանեւան չի թարգմանել KUR Արշակունիա-նի հասուածը: Բառի չգոյութիւնը, իրեւ հասարակ անուն, ցոյց է տալիս, որ սա կարող էր ընդհակարագիս հասարակ անուն չլինել, այլ լինել յատուկ անուն: Herman Vansiphout-ի թարգմանութիւնը (to dart) չունի որեւէ զրաւոր հիմք: Դա իր ենթագրեալ թարգմանութիւնն է, որ բինցուել է համատեքստից (աւելի ճիշտ՝ իր ենթագրած համատեքստից): 437-րդ տողը նաև թարգմանել է հետեւեալ կերպ.

437. HI.SUHUR<sup>ku6</sup>-gin<sub>7</sub> KUR Արշակունիա-նի aratta<sup>ki</sup>-aš bateg<sub>3</sub>

Darted over the highland like a swimming carp and reached Aratta.

<sup>45</sup> «Эймеркар и верховный жрец Аратты», транскрипции, перевод, комментарии и вводные статьи И. Т. Каневой, ВДИ, 1964, № 4, стр. 215.

<sup>46</sup> Նին այստեղ մեծ հաւանականութեամբ չումերերէնի քերականական մասնիկ է:

«(Դեսպանը) նետուեց (ոստնեց) լեռնաշխարհի (բարձրաւանդակի) վրայով լողացող ծածան ձկան նման եւ հասաւ Արատտա»:

Թէ ինչպէս կարելի է նետուել, ոստնել լեռնաշխարհի վրայով լողացող ձկան նման, թողնում ենք թարգմանչի երեւակայութեանը, բայց փաստենք, որ ո՞չ այս եւ ո՞չ նախորդ տողերում darter-«նետուեց, ոստնեց» բառ չկայ վկայուած։ Կայ «հասաւ, հասնում է» (ba-teg<sub>3</sub>)։ Ուրեմն՝ պէտք է թարգմանել. «հասաւ Ուրուրուտա(նի) երկիր՝ Արատտա»։

Դեսպանի հ-րդ ճամփորդութիւնը Ուրուկից Արատտա բացառիկ է նրանով, որ նկարագրում է շատ կարճ՝ ընդամէնը Յառաջում:

435. kig<sub>2</sub>-gi<sub>4</sub>-a aratta<sup>ki</sup>-aš gin-a-ni (=du-a-ni)

Դեսպանը Արատտա<sup>hihi</sup> գնում է (ընթանում է, վազում է)

436. u<sub>5</sub><sup>himusen</sup>-gin<sub>7</sub> hur-sag-ga<sub>2</sub> nim-gin<sub>7</sub> mel<sub>2</sub>-rin-a

Հաւքի պէս լեռներով (լանջերով), (գնում է) ճանճի պէս մեղ-րի (մեղուի),

437. HI.SUHUR<sup>ku6</sup>-gin<sub>7</sub> KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-ni Aratta<sup>ki</sup>-aš ba-teg<sub>3</sub>

(գնում է) ծածանի <sup>Ճուկ</sup> պէս (եւ) երկիր Ուրուրուտա(նի)՝ Արատտա հասնում։

Այս հատուածում չկայ ոչ մի բայ բացի du/gin-«գնալ, քայլել, ընթանալ, վագել» բառից։ Հսկայական ճամփորդութեան այսպիսի հակիրճ նկարագրութիւնը խօսում է այն մասին, որ արտեղ փոխաբերական իմաստով, բանաստեղծական լեզուով հաւքը, մեղուն եւ ձուկը խորհրդանշում են ողջ ճանապարհն ու նրա «մանրամասները»։ Նման փոխաբերութիւնները սովորական երեւոյթ են նոյնիսկ այսօր (հմմտ. «Հաւքն իր թեւով, օձն իր պորտով չի կարող հասնել» եւ նման դարձուածքները)։ Հաւքը խորհրդանշում է բարձունքները, որով ընթանում է դեսպանը (ինչը նշուած է), մեղուն՝ իրեն բնորոշ տեղանքները՝ անտառներն ու ձորերը, որտեղ որպէս կանոն լինում են մեղրաճանճի՝ վայրի մեղուի բները, իսկ կարպ-«ծածան, գետածածան» ձուկը խորհրդանշում է գետերը, որ անցնում է դեսպանը։ Մածանը պատահական չի ընտրուած։ Դեսպանը գնում է Ուրուկից Արատտա

Եփրասի հոսանքն ի վեր ճիշտ այնպէս, ինչպէս ծածան ձուկն է գնում գետի ակունքն ի վեր ձկնկիթ թափելու:

Դեսպանի բոլոր ճամփորդութիւններն էլ վիակերգում ներկայացուած են նման փոխարերական-ըանաստեղծական պատկերներով: Համեմատենք օրինակ Ուրուկից Արատտա նրա յաջորդ ճամփորդութեան նկարագրութիւնը, որ ընդամենը 4 տող է:

507. kig<sub>2</sub>-gi<sub>4</sub>-a HU- gin<sub>7</sub> te<sub>8</sub> tup<sub>2</sub> ia<sub>3</sub>-ra<sub>6</sub>-e

դեսպանը հաւքի պէս թեւ(եր)ը թափահարեց

The messenger was like a bird flapping its wings

508. <sup>ար</sup>bar-ra maš<sub>2</sub>-e us-sa- gin<sub>7</sub> gurus-uš i<sub>3</sub>-bur<sub>2</sub>-bur<sub>2</sub>-re

ինչպէս գալի (որսաշան կողմից) հետապնդող այծ...

(gurus-uš bur<sub>2</sub> բառակապացութիւնը յայտնի է նաեւ այլ աղբիւրներից, բայց իմաստը յայտնի չէ)

509. hur-sag 5 hur-sag 6 hur-sag 7-e im-me-re-bal-bal

յեռ 5, յեռ 6, յեռ 7 նա անցաւ

510. igi mu-un-il<sub>2</sub> aratta<sup>ki</sup>-aš ba-teg<sub>3</sub><sup>47</sup>

աչքերը բարձրացրեց՝ Արատտա էր հասել:

Պարզ է, որ այսեղ կրկին դեսպանի ընթացքը համեմատում է հաւքի թոփքի եւ գալիից հետապնդուող այծի (կամ այծին հետապնդող գալի) սլացքի հետ: Այս օրինակից ակնյայտ է, որ նախորդ ճամփորդութեան մէջ յիշատակուող ծածանն ընդամենը խորհրդանշական պատկեր է եւ կազ չունի KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-ni-ի հետ:

KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-ni Aratta<sup>ki</sup> զրելաձեւը ցոյց է տալիս, որ այս երկու երկրները նոյնն են կամ որ աւելի հաւանական է՝ մէկը միւսի մաս է կազմում: Քանի որ Արատտա երկիրը կոչւում է նաեւ Արատտա քաղաքի երկիր, մենք աւելի հաւանական ենք համարում, որ Արատտա քաղաքն է մաս կազմել աւելի մեծ Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-(ni) երկրի: Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-ի մէջ մենք տեսնում ենք Արա-

<sup>47</sup> Herman Vansiphout, Epics of Sumerian kings. The Matter of Arattā. Atlanta, 2003, page 84.

բառ՝ կամ՝ Արարատ տեղանունը, որ «Աշխարհացոյց» է հասել Արարատ նահանգի անուամբ:

Մթ-սառ-կա-սառ-ի հնչիւնական տեսքը ճշտիւ համապատասխանում է Արարատ բառին. եւ եւ է նոյն սեպն է, եւ դա տարբերութիւն այստեղ չկայ, իսկ ու-ա տարբերութեան համար հմմտ. նոյն տեղանունը եւ ձով եւ առով զրելու բազմաթիւ օրինակները (armer-urme եւ այլն) կամ ար/uri, որ նոյն սեպն է, եւ որով Վանի թագաւորութեան արքաները գրում են իրենց երկրի անունը՝ Arī<sup>ki</sup>=Urī<sup>ki</sup>:

### Վերջարանի փոխարեն

Ինչպէս նշեցինք, սրբածութիւնը, սրբածութիւնը կամ անունը, շումերերէնում չկայ վկայուած, բայց կայ մի բառ, որ շատ նման է՝ ՇԱ-ՄԹ-ՍՐԲ-ԱՆ-ԴԱ-ՆԻ-purification (ceremony)-«սրբագործում», մաքրագործում (ծէս)»<sup>48</sup>: Աքքաղ. նոյն (takperto) բառի դիմաց շումերերէնում կայ երկու բառ՝ ՇԱ-ԳՈՐ-ԳՈՐ եւ ՇԱ-ՄԹ-ՍՐԲ-ԱՆ-ԴԱ-ՆԻ<sup>49</sup>: Եթէ ՇԱ-Ն երկու դէպքում էլ Համարենք զաղափարագիր՝ «Ճեռք», եւ Համարենք բառի արմատական մաս, ապա վերջինս կը նոյնանայ վիպերգիր՝ սրբածութիւնը ձեւի հետ, մանաւանդ որ այսքան երկար բառի դէպքում պատահական նմանութիւնը քիչ հաւանական է: «Սրբագործում» եզրի նախնական իմաստը բնականաբար պէտք է լինի «մաքրել, սրբել»: Եւ իսկապէս, Լաբայի բառարանում մենք տեսնում ենք (ՇԱ)-URՅ, որ նշանակում է (Փրանսերէն) effacer-«մաքրել, սրբել»<sup>50</sup>: ՇԱ-«Ճեռք» զաղափարագիրը գրուած է փակագծերում, որովհետեւ այս դէպքում այն կարող է գրուել կամ չգրուել. միեւնոյն է, երկու դէպքում էլ URՅ-ը նշանակում է «մաքրել, սրբել»: Այսինքն՝ ՇԱ-ՄԹ-ՍՐԲ-ԱՆ-ԴԱ-ՆԻ եւ սրբածութիւնը ձեւերը բացարձակ Համարժէքներ են: Սա նշանակում է, որ

KUR սրբածութիւնը Aratta<sup>ki</sup>=Երկիր (լեռ) սրբագործման (ծէսէրի)՝ Արարատ:

<sup>48</sup> <http://psd.museum.upenn.edu/epsd/nepsd-frame.html>

<sup>49</sup> Անդ:

<sup>50</sup> René Labat, «Manuel d'Epigraphie Akkadienne», Paris 1976, էջ 131, սեպանը շահ N 255:

KUR ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni=KUR ME SIKIL-la=e<sub>ri</sub>k<sub>hi</sub>p (լեռ) սուրբ ծէսերի (աստուածային օրէնքների):

Այս դէպքում, KUR ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-da-ni-ն պէտք է զիսարկել ոչ թէ որպէս յատուկ անուն, այլ որպէս հասարակ անուն եւ Արատտա երկրի բնորշում, որի գրեթէ բառացի տարրերակը վազուց յախանի է այլ ձեւակերպմամբ (KUR ME SIKIL-la):

Ենթադրենք, որ մենք գտել ենք ար<sub>3</sub>-ար<sub>3</sub>-ru-da-ni հասարակ անունը եւ նրա իմաստը (նոյնացնելով շն-ար<sub>3</sub>-ար<sub>3</sub>-ru-da-ni-ի հետ): Արգեօ՞ք, սա հակառակ է այն պնդմանը, որ այսաեղ պէտք է տեսնել հետագայի Ա(յ)րարատ տեղանունը: Մեր կարծիքով, ոչ, որովհետեւ բոլոր տեղանուններն էլ ծագում են հասարակ անուններից: Հէնց երկրներին տրուած բնորշումներն են, որ յետոյ գառնում են մշտական, այսինքն՝ դառնում են յատուկ անուն: Վերը քննուած կող յատուկ անունը նոյն շումերերէն կաց-«սուրբ» հասարակ անունն է:

Աւելին՝ Արատտայի միւս բնորշումը՝ KUR me-sikil-la, նոյնպէս պահպանուել է որպէս յատուկ անուն: Sikil-«սուրբ» գաղափարագիրը սովորական վանկագրի ըլ սեպանչանն է: Ել չումերերէն նշանակում է «ելնել, բարձրանալ, բարձրացնել, ծագել», այսեղից՝ «բարձրեալ, աստուած(ային), սուրբ» իմաստները: Sikil ընթերցումը ըլ բառի հօմանիշն է: Շումերական դպրութեան մէջ գաղափարագիրը հօմանիշով կարգալ-հնչեցնելը սովորական երեւոյթ է: Մա նշանակում է, որ նոյն սեպը նոյն յաջողութեամբ կարելի է կարգալ ըլ հնչիւնական արժեքով. այսպէս՝ me-sikil-la=me-el-la: Մել-ը վկայուած է ուրարտական արձանագրութիւններում, որպէս գետանուն՝ Me-li-a-i-ni ID<sub>2</sub>: Հաս Ն. Յարութիւնեանի, համապատասխանում է վերին Եփրատին, Արածանիի հետ միախառնման տեղից հիւսիս<sup>51</sup>: Յիշենք, որ Մեղ է կոչում նաև Արածանիի վատար, որ ժողովրդական ստուգարանութեամբ դարձէլ է Մեղրազեա:

Մա նշանակում է, որ մենք կանգնած ենք Ա(յ)րարատ բարձրի նախնական իմաստը հասկանալու շեմին.

KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ta-(ni)=երկիր (լեռ) «սրբագործման (ծէս(եր)ի)»:

<sup>51</sup> Հ. Բ. Արուտոյն, «Корпус урартских клинообразных надписей», Ереван, 2001, стр. 514.

KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-(ni) = *լեռ Արարատ, լեռներ Արարատեան,*

KUR Ur<sub>3</sub>-ur<sub>3</sub>-ru-ṭa-(ni) = *եղկիր Այրարատ:*

«Ենմերքարը եւ Արատայի գերազոյն քուրմը» վիպերգի իրադարձութիւնները կատարուել են մ.թ.ա. 28-27-րդ դարերում։ Այն ժամանակ ururuta/ararata բառը եղել է միաժամանակ ե'ւ յատուկ անուն, ե'ւ հասարակ անուն, ինչպէս այսօր էլ Ոսկի-ն, Ծաղկանց լեռները միաժամանակ ե'ւ յատուկ, ե'ւ հասարակ անուններ են։

Մենք սա համարում ենք Ա(յ)րարատ տեղանուան (զիտութեանը յայտնի) հնագոյն յիշատակութիւնը զրաւոր աղբիւրներում։

ԱՐՄԵՆ ԴԱԻԹԵԱՆ

## Գրականութեան ցամկ

- Աղոնց Ն., «Հայաստանի պատմութիւն», Երևան, 1972
- Անանեան Հր., «Հայերէն արմատական բառարան», հատոր 1, Երևան, 1971
- Անանեան Հր., «Հայերէն արմատական բառարան», հատոր 2, Երևան, 1973
- Անանեան Հր., «Հայերէն արմատական բառարան», հատոր 3, Երևան, 1977
- Անանեան Հր., «Հայերէն արմատական բառարան», հատոր 4, Երևան, 1979
- «Աստուածաշնչական Հայաստան», Երևան, 2005
- Եղիշէ, «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1989
- «Հայաստանի և յարակից շրջանների տեղանունների բառարան», հատոր 2, Երևան, 1988
- «Հայաստանի և յարակից շրջանների տեղանունների բառարան», հատոր 4, Երևան, 1998
- «Հայկական Մովիսական հանրագիտարան», հատոր 5, Երևան, 1979
- Գր. Ղափանցեան «Խերարտուի պատմութիւնը», Երևան, 1940
- Մովիսիսեան Ա., «Հնագոյն պետութիւնը Հայաստանում. Արատսա», Երևան, 1992
- Մովիսիսեան Ա. «Հայաստանը Քիստոսից առաջ երրորդ հազարամելում (ըստ գրաւոր աղբիքների)», Երևան, 2005
- Փաւստու Բուզանդ, «Հայոց պատմութիւն», Երևան, 1987
- Հ. Բ. Արդյոնյան, «Корпус урартских клинообразных надписей», Ереван, 2001
- Հ. Բ. Արդյոնյան, «Топонимика Урарту», Ереван, 1985
- Б. Ван-дер-Верден, «Пробуждающаяся наука 2. Рождение астрономии», Москва, 1991
- Br Ignace F. Gelb «Hurrians and Subarians», Chicago
- P. Anton Deimel S.I. Pantheon Babylonicum. Oder Keilschriftkatalog der Babyl. GN Rom, 1950
- Herman Vansiphout, Epics of Sumerian kings. The Matter of Aratta. Atlanta, 2003
- René Labat, «Manuel D'Epigraphie Akkadienne», Paris, 1976  
<http://psd.museum.upenn.edu/epsd/nepsd-frame.html>
- «Энмеркар и верховный жрец Аратты», транскрипции, перевод, комментарии и вводные статьи И. Т. Каневой, «Вестник древней истории» N 4, 1964

## On the location of the Aratta country

ARMEN DAVTYAN

(summary)

The location of the Aratta country was defined by its ancient name which comprises the LAM.KUR.RU Sumerian cryptograms. As far as LAM in Sumerian language means «to flourish», whereas «KUR» means «land, mountain(s)», hence in translation the name of the country means «mountains in blossom, mountains of flowers». That suggests its identity with the two Armenian mountain chains called the «Flowers' mountains» one of which is the source of Eastern Ephrata (Aratsani – Arm.), the other one is that of Western Ephrata.

It is more likely that the spiritual-political centre of Aratta country was situated at the head of Aratsani river. The site has preserved the holy tradition for ages.